ՄԵՐ ՌԱՖՈՆ 60 ՏԱՐԵԿԱՆ

Ահա և մի արտակարգ երևույթ, ռեալ, գոյություն ունեցող մի փաստ, որը շարժման մեջ է դնում մարդկային կյանքի որոշակի լծակներ, խոսեցնում շարքային և մասնագետ մարդկանց, մարդկային խմբեր, կազմակերպություններ, ժողովուրդ: Այս պարագան ինքնին պերճախոս է, որ երևույթը համարվի համաժողովրդական լամազգային և որպես այդպիսին՝ ընդհանուր-մարդկային:

Ռաֆայել Իսրայելյան, նա է, ստեղծագործական քանքարի իր ողջ հասակով մեկ, մեր կողքին, մեր դիմաց, մեր շուրջը, մեր օրերում:

Լինելով հոբելյարի ժամանակակիցը, այնուամենայնիվ հնարավոր է դարձել բաց հայացքով, սթափ մտքով և ջերմ հոգով զգալ նրա գոյությունը, գործունեությունը, նշանակությունը մոտ անցյալի, այսօրվա և վաղվա համար:

Որքան էլ որ մեծ էր Թամանյանը, որքան էլ հզոր նրա ստեղծագործական արտադրանքի տպավորությունն ու հմայքը ժամանակակիցների վրա, այնուամենայնիվ նրա կսկծալի և անժամանակ մահը սառսուռով խուժեց ամեն մի հայրենասերի սիրտ, սփռելով աներևույթ մի ահ, թե արդյո՞ք նրանից հետ հայ ճարտարապետությամբ կառուցելը այլևս պիտի դառնա երազանք: Չէ՞ որ ժամանակները նոր էին, հասկացողությունները միմյանցից տարբեր, անհաշտ, անհարիր, աննպաստ:

Թամանյանի «մայր ջրատարը» թեպետ և միանգամից չցամաքեց, ցայտում էին առանձին ծորակներ, հուսա կայծեր, սակայն նրանք ի վիճակի չպիտի լինեին ոռոգել պապակ հողը: Պետք էր իր սեփական հունով անցնող մի նոր ջրատար, որ լիներ հզոր հեղեղի նման, որ քշեր, տաներ ամեն պատեհ արգելք, որ նրան տեսնեին, նրան հասկանային և ընդունեին, որպես ազգընծա հարազատի:

Թամանյանից հետ, ահա այդ դերը խաղաց ինքը՝ Ռաֆայել Իսրայելյանը, քարգործ, ճարտարապետ Ռաֆոն:

Նա իր արվեստով եկավ ու հաստեց իր գոյության տիրական իրավունքը, քանզի ընդերքից էր գալիս, շաղախված հողին ու ջրին, քարին ու սարին մեր լազուր-լազուր երկնակամարին:

Եվ եթե մենք այսօր ունենք հայրենաշունչ արվեստ, կերտվածք՝ հայի կեր-պարանքով, որը գնահատվում, արժեքավորվում է նաև օտարի կողմից, ապա այդ գործում նո. 1 ներդրումն արել է նա, մեր ժամանակակիցը, մեր արվեստակիցը, մեր գործակիցը, մեր ընկերը, բայց ոչ հավասարի, այլ նավավարի իրավունքով:

Նկ. 1 – Տիրան Մարությանը (ձախից) և Ռաֆայել Իսրայելյանը միասին նախագծած Սևան ՀԷԿ-ի ջրահեռացման թունելի ելքի մոտ:

Ինչպես որ բոլոր իսկական մեծերը, մեր պատվելի հոբելյարը իր արվեստով արարչորեն շռայլ է, շռայլ բնության, բարության չափ: Նա բարի է, շռայլորեն բարի: Նա պարզ է ու հասարակ, որպես շարքայինը: Նա համեստ է, գոհ է անսահմանորեն ամեն մի շարքային քար հայրենի պատի վրա դնելով:

Նրա հայրենասիրությունը, որ պաշտամունքի բնույթ ունի, նրան դարձրել է բազմաքանքար, ոչ միայն ճարտարապետ, նաև նկարիչ է, մանրանկարիչ, առասպելական այլակերպությունների օրիգինալ ստեղծող: Նա նաև գրող է, պատկերավոր, յուրօրինակ լեզվով նկարագրող:

Ինձ թվում է, թե նա այրվում է իրեն հասանելի ցանկությամբ՝ ամեն հնարավոր ասպարեզում օգտակար գործ կատարել հայրենիքի համար, նրա բարգավաճման համար: Եվ իրոք, այս այն գերագույնն է, որին պետք է իր կյանքը նվիրաբերի ամեն մեկը, ով ի վիճակի է այդ անելու:

Մեր արվեստում իրենց տեղն են ունեցել և ռեալ, և հեքիաթային կենդանիներ, թռչուններ, այդ թվում և Զվարթնոցի հզոր արծիվները: Մեր օրերում հայոց արծիվը ամեն տեղ իր տեղը գրավեց, թե կոթողներում, թե փոքրիկ կրծքանշաններում և ամենուր: Հիշենք, որ այդ լուռ արծիվներին նախ և առաջ կենդանություն տվեց մեր Ռաֆայելը: Որեմն, թող միշտ այդպես, այդ թևատարած արծիվների պես Ռաֆոյի քանքարի արծիվը իր հուժկու թևերով թևածի հայոց մեծ արվեստի կապտակապույտ երկնագմբեթում, միշտ լսելի լինի մեր գոյությունը հավաստող նրա կռինչը:

13.12.1968 թ.